ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 7 » մայիսի 2025 թվականի N: 183 -Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից թվով չորս դիմումների ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով դիմումատու քաղաքացիներին հատկացնել 110000 /մեկ հարյուր տասը հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

2025 թվականի <<7>>մարտի-ի N183-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

N	Անուն, ազգանուն,	Հասցեն	Գումարի չափը /դրամ/
1	Լուսվարդ Ղուկասյան	Քաղաք Գյումրի, Ղանդիլյան փողոց, տնակ 158/202	30000 /երեսուն հազար/ դրամ
2	Մարիամ Հովհաննիսյան	Քաղաք Գյումրի, Դեմիրճյան փողոց, 8-րդ նրբանցք, տուն 18	30000 /երեսուն հազար/ դրամ
3	Գեղեցիկ Հովհաննիսյան	Աշոցք համայնք, Կաքավասար բնակավայր, 6-րդ փողոց, տուն 14	20000 /քսան հազար/ դրամ
4	Սեդա Ասլանյան	Քաղաք Գյումրի, Հալաբյան փողոց, շենք 3, բնակարան 16	30000 /երեսուն հազար/ դրամ
	Ընդամենը		110000 /մեկ հարյուր տաս հազար/ դրամ